



47. ԱՍՏՎԱԾ ԼԸՍՅԸՐՈՒՅ

Մին սուլ տըռնե մին շատ խոխատեռնը տանը ուտելի պեն շի կար: Ուրոնգյոնը խոխեքյը սոված ին, մնացալ ին մորն իրեսեն յիշիլիս: Մարը խոխոցը խիփիլի հետե զզղանը ճիրնվ լըցալ ա, մաշը քարեր նի տուվալ, տիրնվ կրակեն: Ծոնը իփում ա, նորըմի-նան իփոնմ, զըզղանեն «խորագյը» իփում շար: Խոխեքյը զըզղանեն քըշտին նստալ ըն, վիզըրենեն ծռալ, սովըծթունան թնւլացալ, մին-մին էլ դաթումը հըրցնում ըն.—Մամմա, սլա իփալ շի... Մարն ասում ա.—Չէ՛, հնւլն իփալ շի, մխըրե քոն իլիթյ, եր կըկենաք տըռնաք իփած: Խոխոցը հնրն էլ քյնցալ ա օրիշ տըեզ, թա տըռնա հի՛շտըղա յա մխըրե դանն, անլըն-պենն քթեննում, նա յեւ հալն եկալ շի: Խոխոցը ումեզը կըտրում ա, սոված քունալ ըն հընցնում:

Քշերեն կեսումը մինը տոռնը թալում ա, էտ կնեգյը հըրցնում ա, թա տու հու վը՛ս: Տոնան մին մարթ ասում ա.—Տոռնը պեց ըրա, դարիբ դոնաղ ըմ: Կնեգյն ասում ա.—Ղոնաղն ըստուծենն ա, ամ-մա տանըս մարթ շի կա, ես էլ խոխատար ըմ: Տոնան էտ մարթն ասում ա.—Մըեծ մարթ ըմ, վախումեւ, տոռնը պեց ըրա, տանըտ մին ընգյոնին կոշ կըկլամ, լոնըցնըեմ, էլլա հղե ինիմ, քյի-նամ: Տա տոռնը պենում ա, մին սիպտակ մըզըրերալ հլիվուր մարթ նի յա մննում, պարի ուրոնգյոնն ասում, նըստում: Ստան հըրցնում ա, թա էտ հինշ ը՛ս իփալ: էտ կնեգյը վըեշ մին պեն կյնդում շի, հինշ վըեր կա, լոխ նաղլ ա անում: Ղոնաղը զըզղա-նեն մուտանում ա, իրեսը խըլըհանում, ասում.—Մեհենգյ մաշին

լնվ վրխճարու մսավ խորագլ ա, խուխոցը զուրթնըցրու, թող
օտըհն:

էտ կնեգլը կրակեն մուտանում ա, մսավ խուրագլին վրետը
տամ ա քթըհն, օզում ա, վրեթ դունադեն հետե քցի, եշում ա,
տըհանում տանը դոնադ շի կա, տոռն էլ մաթ դոլան կապ ա: Էտ
կնեգլը մաննը կծում ա... ասում ա.—Աստված ար, խուխոցըս
փայլը հըսցըրուց:

